Թիւ 27701
Մարտ 22, 1982

Բարեշնորհ
Գրիգոր Սրկ. Զմրուխեան
Թորոնթօ, Գանատա.

Սիրելի Գրիգոր Սարկաւագ,

Հիւսիսային Ամերիկայի Հայց. Եկեղեցւոյ Արեւելեան Թեմի Թեմական Խորհուրդը Մարտ 18, 1982 նիստին մէջ որոշեցինք Գանատայի Թորոնթօ քաղաքին մէջ երկրորդ ծխական համայնք մը կազմակերպել, ենթակայ Առաջնորդին եւ Թեմական Խորհուրդի իշխանութեան:

1. Համայնքին կազմակերպման աշխատանքին համար ձեզ կը նշանակենք Հոգեւոր Մատակարար:

   ա. Ձեր պարտականութիւնը պիտի ըլլայ մեր կողմէ նշանակուած ծխական խորհուրդին ժողովներուն նախագահել իբրեւ Առաջնորդէն նշանակուած Հոգեւոր Մատակարար:

   բ. Պատասխանատու եւ կարգադրիչ նկատուիլ ծխական համայնքին անունով կատարուելիք խորհրդակատարութեանց եւ կրօնական արարողութեանց:

2. Նոյնպէս, ծխական խորհուրդի անդամ կը նշանակենք հետեւեալ պարոնները.

Բանտաս Յակոբ
Գազանճեան Գրիգոր
Գույումճեան Խաչիկ
Դաւիթեան Պարգեւ
Երէցեան Յակոբ
Թորոսեան Հենրիկ
Իսթանպուլ Եփրեմ
Մուրատեան Վահան
Տէմիրճեան Մարտիկ

Առաջնորդի Փոխանորդ Հոգշ. Տ. Յուսիկ Ծ. Վրդ. Ղաղասեան Թորոնթօ պիտի գտնուի Մարտ 25-26ին: Կը հրահանգենք որ իր նախագահութեամբ առաջին ժողովը գումարէք ձեր կողմէ նշանակուած վայրի մը մէջ եւ ըն-լոլից յարմար ժամանակին:

3. Ծխական Խորհուրդը պաշտօններու համար հաճեցէք խորհրդակցաբար ընտրել պաշտօնեաները, եւ ամբողջ Ծխական Խորհուրդի անդամներու անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը մեզի ղրկել:

4. Նկատի ունենալով Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ ծուխին նախկայութիւնը եւ անդամութիւնը Թորոնթոյի մէջ, ներկայիս վերակազմուելիք ծուխը պիտի կոչենք ``Հայց. Եկեղեցի Նոր Ծուխը``, մինչեւ որ նոր անդամագրութիւն հաստատելով կարենանք արձանագրուած վճարու անդամներով առաջին Անդամական ժողովը գումարել մօտիկ ապագային:

5. Հոգեւոր Մատակարարը եւ Ծխական Խորհուրդը պարտին հետամտիլ եւ կատարել հետեւեալ աշխատանքները.

   ա. Գտնել յարմար վայր մը եւ եկեղեցի մը, ուր կարենանք կանոնաւոր պաշտամունք կատարել, եւ կազմակերպել մեր զաւակներուն կրթական, մշակութային, հոգեւոր եւ ազգային ընկերական կեանքը, կազմակերպելով Տիկնանց Միութիւն Երիտասարդաց Կազմակերպութիւն, Դպրաց Դաս, Շաբաթօրեայ Հայ Դպրոց, Կիրակնօրեայ Վարժարան:

   բ. Առանձին արձանագրութիւն պահել վճարող անդամներու, որոնք մօտիկ ապագային պիտի հրաւիրուին պաշտօնական եւ օրինաւոր Ծխական Անդամական ժողովի: Եկեղեցւոյ վճարող անդամ արձանագրուող ամէն անհատ պարտի ստորագրել վճարող անդամութեան համար պատրաստուած հաստատագիրը: --Տես օրինակը--

   գ. Իւրաքանչիւր վճարող անդամ պարտի վճարել իր տարեկանը, նուազագոյն 25 --քսանըհինգ-- տոլար:

   դ. Ոչ մէկ պարագայի Ծխական Խորհուրդը կրնայ որեւէ պարտաւորութեան տակ դնել ծուխը կամ Առաջնորդարանը, որեւէ նպատակով կամ պատճառով կալուածական գնում կատարելով կամ շէնքի գործածութեան անունով վարձքի կամ այլ ծախքի ենթարկելով, առանց գրաւոր արտօնութիւնը ստանալու Առաջնորդին եւ Թեմական Խորհուրդին:

   ե. Ծխական Խորհուրդի մէջ ծառայելու համար նշանակուած որեւէ մէկ անդամի տեղ, որ անկարող է իր պարտականութիւնները կատարել մահուան, հրաժարման կամ այլ պատճառաւ, Առաջնորդը եւ Թեմական Խորհուրդը նոր անդամ մը կը նշանակեն մինչեւ օրինաւոր Անդամական ժողովի գումարումը:

դ. Ծխական Խորհուրդի նշանակուած անդամները պիտի ծառայեն հրահանգներուն համաձայն Առաջնորդին եւ Թեմական Խորհուրդին։ Ծխական Խորհուրդի ոեւէ մէկ անդամ որ կ'անտեսէ կամ հակառակ կը գործէ տրուած հրահանգներուն, անմիջապէս կ'ըլլայ պաշտօնէ հեռացուելու Առաջնորդի եւ Թեմական Խորհուրդի պաշտօնագրով։

է. Հոգեւոր Մատակարարը Ծխական Խորհուրդի ժողովներու եւ որոշումներու արձանագրութիւններէն օրինակ մը պէտք է Առաջնորդարան ղրկէ կանոնաւորաբար։

ը. Ծխական Խորհուրդի կողքին, համայնքի եւ կրօնական արարողութեանց երգեցողութիւնը կատարելու համար երաժշտական-պատասխանատու կը նշանակենք մայեսթրօ Դաւիթ Վարժապետեանը, որ Հոգեւոր Մատակարարին հետ խորհրդակցաբար պատասխանատու կ'ըլլայ Դպրաց Դասը կազմակերպելու եւ մարզելու, համաձայն մեր Թեմի Դպրաց Դասերու Կազմակերպութեան Կանոնադրութեան։

թ. Ծուխին համար նշանակուած Հոգեւոր Հովիւի մը բացակայութեան պատճառաւ, համայնքին ամէնօրեայ հոգեւոր կարիքներուն համար, անմիջականօրէն կը դիմէք Արժ. Տ. Յուսիկ Քհնյ. Նշանեանին, զոր նշանակած ենք Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ հովուութեան։

Մեր թելադրութիւնն է որ Ծխական Խորհուրդը համերաշխութեամբ եւ իմաստութեամբ գործադրէ իրեն վստահուած պարտականութիւնները, հարթելով անցեալի տարակարծութիւնները եւ զօրացնելով մեր զաւակներուն հոգեւոր եւ իմացական տաղանդը եւ կարողութիւնները, մեր հոգեւոր մօր՝ Հայց. Սուրբ Եկեղեցիի հովանիին ներքեւ խմբելով զանոնք եւ բարգաւաճցնելով անոնց կրօնական, մշակութային, ազգային, կրթական եւ ընկերային կեանքը։

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ